

# ՄԱՆԿԱԳԱՏՄԱՆԵԿԱՆ

## ՀՈՐԻՋՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՋՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Մայիս 2022



### ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ,

Պատմության ընթացքին, տարբեր ժամանակներու մէջ, մեր ժողովուրդը ունեցած է շատ դժուար եւ շատ փայլուն օրեր: Տարիներու ընթացքին ունեցած ենք տարբեր-տարբեր թշնամիներ, ունեցած ենք նաեւ թագաւորներ, կայսրութիւն... Կորսնցուցած ենք պատերազմներ, բայց կերտած ենք յաղթանակներ. տեսած ենք ջարդ. բայց յետոյ 1918-ի մայիսեան հերոսամարտերով Սարդարապատով, Բաշ-Ապարանով եւ Ղարաքիլիսէով վերածնած ենք եւ ունեցած՝ ազատ եւ անկախ հայրենիք: Ինկած ենք խորհրդային իշխանութեան տակ, յետոյ 1991 սեպտեմբեր 21-ին դարձեալ անկախացած... Աւելին, միասնական ոգիով պայքարած ենք եւ ազատագրած ենք Արցախը: Վերջերս սակայն, 27 սեպտեմբեր 2020-ին, ազերիները, թուրքերու եւ այլ վարձուած զինուորներու հետ միասին, յարձակեցան Արցախի վրայ: Առիծի պէս քաջ մեր զինուորները կռուեցան պաշտպանելու համար մեր հողն ու ջուրը, կորսնցուցինք ճակատամարտը, որովհետեւ թշնամին յաջողեցաւ բաժնել հայութիւնը: Բայց չենք կորսնցուցած պատերազմը, որովհետեւ ան չէ վերջացած տակաւին: Քանի դեռ կանք, պիտի շարունակենք մեր պայքարը: Յուսահատելու չենք, ինչպէս որ անցեալին յաջողեր ենք դուրս գալ նման դժուար վիճակներէ, այսօր եւս կը յաջողինք: Ժամանակն է որ բոլորս միասին, հաւաքենք մեր ուժերը եւ բարձր պահենք մեր մէջ ազատութեան ոգին:

Թշնամին այսօր գրաւուած է մեր հողերուն մէկ մասը եւ կը քանդէ մեր եկեղեցիներն ու մշակութային արժէքները, բայց ան չի կրնար քանդել մեր ազատ ու անկախ ապրելու կամքը: Ուրեմն մեր յոյսերը վառ պահենք եւ հաւաքական ուժով պայքարինք:

### ՄԱՅԻՍԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՄԻՍ»

Մարտ 2022-ի վերջաւորութեան, Օնթարիօ խորհրդարանը մայիս ամիսը հռչակեց «հայկական ժառանգութեան ամիս»: Այսպէս ամէն տարի մայիսին Օնթարիոյ մէջ, պիտի նշուի «հայկական ժառանգութեան ամիս», որուն ընթացքին Օնթարիոցիներ առիթը պիտի ունենան ծանօթանալու եւ գնահատելու զանատախապատակ հայերու արձանագրած յաջողութիւնները արուեստի, գիտական, մշակութային, տնտեսական եւ քաղաքական գետնի վրայ:

### ՄԱՅԻՍԸ ՄԱՅՐԵՐՈՒ ԱՄԻՍ Է

Հայ մօր դերը մեծ եղած է մեր պատմութեան ընթացքին: Անոր փափուկ սրտին ու գուրգուրացող հոգիին ետեւ կայ քաջութիւն, կայ համբերութիւն, կայ հաւատք եւ կայ հայրենասիրութիւն:

Յարգանք բոլոր այն մայրերուն, որոնք անհամար զոհողութիւններով կը պահեն իրենց զաւակները հայ, դաստիարակելով զիրենք որպէս օրինակելի հայեր: Անոնք կը ցանեն իրենց զաւակներուն մէջ սէր ու գուրգուրանք հայ լեզուի ու մշակոյթի նկամամբ, եւ կը փոխանցեն անոնց ազգային եւ բարոյական արժէքներ:

Յարգանք բոլոր այն մայրերուն, որոնք ինչպէս տան մէջ, նաեւ ընտանիքէն դուրս, մեծ նուիրումով կը գործեն ազգային, քաղաքական թէ ընկերային գետնի վրայ, ազատութեան եւ արժանապատուութեան ոգին փոխանցելով յաջորդ սերունդներուն:

Յարգանք մանաւանդ բոլոր այն մայրերուն, որոնք հայրենասիրութեամբ լեցուած հերոս զաւակներու ծնունդ տուած են: Կը խոնարհինք այդ անմահներու յիշատակին առջեւ: Եւ վրէժի զգացումներով լեցուած կը կանգնինք նահատակուած զինուորի հերոսուհի մօր կողքին, ուխտելով շարունակել պայքարը:

# ԵՐԳԵՆՔ ՈՒ ԶՕՐԱՆԱՆՔ

Աշուղ Զիւանին ապրած է 1846-էն 1909: Ան բոլորին ծանօթ ու յայտնի աշուղ մը եղած է: Իր նշանաւոր տաղերէն մէկն է «ԿՈՒ ԳԱՆ ՈՒ Կ'ԵՐԹԱՆ», որ գրած է 1892-ին:

Այս գրութենէն 130 տարիներ ետք, դարձեալ ճակատագրական օրեր կ'ապրինք ազգովին... Եւ ինչպէս միշտ տառապանքէն կը ծնին քաջեր, որոնք ունին յարատեւելու կամք եւ պայքարի ոգի: Աշուղ Զիւանի իր այս երգով կ'ուզէ պարզել բոլորին թէ յոյսը երբեք կորսնցնելու չենք:

Ստորեւ կարդանք հատուած մը այս երգէն.

## ԿՈՒ ԳԱՆ ՈՒ Կ' ԵՐԹԱՆ

Ձախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան,  
Վհատելու չէ, վերջ կ'ունենան կու գան ու կ'երթան.'  
Դառն ցաւերը մարդուն վրայ չեն մնար երկար,  
Որպէս յաճախորդ շարուէ շարան կու գան ու կ'երթան:

Փորձանք, հալածանք եւ նեղութիւն ազգերի գլխից,  
Ինչպէս ճանապարհի կարաւան, կու գան ու կ'երթան...



## ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ.

### ԻՆՁ ՆՄԱՆ ՀԱՅ ԷՐ ՌՈՒԲԷՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Ռուբէն Գույումճեան ծնած է Պոլիս 1936-ին: Իր համալսարանական ուսումը ստացած է հոն, մասնագիտանալով ելեկտրագիտական ճարտարապետութեան ճիւղին մէջ: Թրքական բանակին մէջ իր զինուորական ծառայութիւնը կատարած է որպէս ծովային սպայ եւ ունեցած՝ բարձր պաշտօն:

Ջարդէն վերապրողներու զուակ ըլլալով եւ թուրք պետութեան բռնակալ ու շահագործող քաղաքականութիւնը տեսնելով, Ռուբէն իր մորթին վրայ կը զգայ հայուն տառապանքը եւ կը լեցուի պայքարի ոգիով:

Իր ազատ ու անկախ ապրելու կամքը զինք կը մղէ հեռանալ իր ծննդավայրէն: Երբ կը հաստատուի Մոնթրէալ նախ իր ուսումը կը շարունակէ Université du Québec à Montréal-ի մէջ, ունենալու համար ուսուցչութեան վկայական, յետոյ Մագիստրոսի աստիճանով (Maîtrise) կ'աւարտէ Մոնթրէալի համալսարանը (UdeM) մասնագիտանալով կենսաբժշկական ճարտարապետութեան ճիւղին մէջ (génie biomédical) :

Ռուբէն Գույումճեան կ'աշխատի որպէս ուսուցիչ թուաբանութիւն եւ գիտական նիւթեր դասաւանդելով: Մարզասէր ըլլալուն, իր աշխոյժ մասնակցութիւնը կը բերէ ՀՄԸՄ-էն ներս: Իսկ հայրենասիրութիւնը զինք կը մղէ միանալու Հայ Դատի մեծ ընտանիքին, ուր մինչեւ իր

կեանքին վերջը կը գործէ քաջութեամբ եւ մեծ նուիրումով: Ան շարունակաբար կապեր կը հաստատէ քաղաքապետական, ինչպէս նաեւ Գանատայի նահանգային եւ դաշնակցային քաղաքական դէմքերու հետ եւ իր յարատեւ աշխատանքին իբրեւ արդիւնք, 2002-ին տեղի կ'ունենան Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերը Ծերակոյտին կողմէ եւ 2004-ին՝ Խորհրդարանին կողմէ. իսկ 2006-ին կը կատարուի Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը կառավարութեան կողմէ: Նաեւ իր ճիգերով է, որ 2015-ին կ'որոշագրուի թիւ 587 բանաձեւը, որ ապրիլ ամիսը կը հռչակէ ցեղասպանութիւններու յիշատակման ամիս եւ ապրիլ 24-ը Հայոց Ցեղասպանութեան յիշատակման օր:

Ռուբէն Գույումճեան աւելի քան 30 տարի կը ծառայէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին եւ երբ յանձնախումբը Օթթաուայի մէջ կ'ունենայ գրասենակ, ան կը գործէ այդտեղ իբրեւ տնօրէն:

Արցախի 44 օրեայ պատերազմն ու Հայաստանի վարած քաղաքականութիւնը շատ կը մտահոգեն զինք եւ իր խրատը կ'ըլլայ. «Երբեք չհաւատանք թուրքին. ըլլանք միշտ պահանջատէրը մեր իրաւունքներուն, ըլլանք միասնական ոգիով եւ գործենք ճարպիկ քաղաքականութեամբ: Թուրքերը ասացուածք մը ունին. «Եթէ թելը կ'ուզես, ձեռքէն սկսիր». երբեք չտկարանանք. այլապէս այսօր Արցախն է որ կ'ուզեն, վաղը պիտի ուզեն Տաւուշը կամ այլ շրջաններ: Չըլլանք զիջողական ու ջանձնուիք»:

Հայ Դատի աշխատանքներու բացառիկ գործիչ՝ Ռուբէն Գույումճեան բաժնուեցաւ մեզմէ 15 Նոյեմբեր 2021-ին, բայց իր ազատութիւնը սիրող հոգին կ'ապրի ամէն հայու մէջ: Յարգանք ու պատիւ անոր քաղցր յիշատակին:

## ԱՐՑԱԽԻ ԺԵՆԳԵԱԼՈՎ ՀԱՅՐ



Արցախեան խոհանոցի ամէնէն յայտնի խմորեղէններէն մէկն է ժենգեալով հացը: Ամէն Արցախ այցելող սփիւռքահայ ճաշակելու է այդ համեղ հացը: «Ջանգլալ» պարսկերէնով կը նշանակէ «անտառ», այստեղէն կու գայ նաեւ անգլերէն jungle բառը: Այդպէս կոչուած է հացը, որովհետեւ իր մէջ կը պարունակէ անտառէն եկած 25 տարբեր տեսակի բոյսեր, ինչպէս կանաչ սոխը, կանաչ սխտորը, անանուխը եւ այլ վայրի խոտեր:

Հայաստանի հարաւ-արեւելքը, Սիւնիքի մարզի Կապան եւ Գորիս քաղաքներուն մէջ եւս կը պատրաստեն ժենգեալով հաց: Բայց Արցախի ժենգեալով հացին մէջ 5 տեսակ աւելի խոտ կայ:

Հաւաքուած խոտերը կը լուան, կը մանրեն, աղ, պղպեղ ու ձէթ կ'աւելցնեն: Յետոյ կը տեղադրեն զայն բարակ բացուած խմորին մէջ ու կ'եփեն:

# 9 ՄԱՅԻՍ



9 մայիսը Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանութեան բանակի ստեղծման օրն է: Մայիս 8-ի գիշերը, Քիրս լեռան դիրքերը գրաւելէն ետք եւ Լաչին-Շուշի ճամբան հսկողութեան տակ առնելէ ետք, Հայկական զօրքը կը մտնէ Շուշի եւ Սուրբ Ղազանչեցոց եկեղեցիի աւերուած գմբէթին կը տնկէ հայոց յաղթական եռագոյնը:

Այսօր չունինք Շուշի եւ բռնագրուած է Արցախի 75 առ հարիւրը, բայց ունինք Ստեփանակերտ եւ ազատասէր երիտասարդութիւն: Յանուն մեր նախնիներուն եւ վերջերս անմահացած մեր քաջ հերոսներու յիշատակին, յանուն ապրող հայ զինուորներուն, որոնք մեր ազատութիւնն ու անկախութիւնը ապահովելու համար, սահմանի վրայ, խրամատներուն մէջ կռուելով դէմ դրին վայրագ թշնամիին եւ յանուն ազատութիւնը սիրող մեր ժողովուրդին մենք յիշելու ենք 9 մայիսը եւ ազգովին վերանորոգուելու ենք այդ յաղթանակներով: Պիտի գայ օրը եւ եռագոյնը դարձեալ պիտի ծածանի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցոյ այսօրուան աւերուած գմբէթին վրայ:

# ԱԶԳ-ԲԱՆԱԿ



Հայերս աշխարհի վրայ հայ մնալու եւ հայու շարունակականութիւնը պահելու համար ըլլալու ենք «Ազգ-բանակ»: Այս գաղափարին հաւատարիմ եղած ենք մեր պատմութեան տարբեր ժամանակներուն. օրինակներէն մէկն է Արցախը: Արցախեան պատերազմի սկիզբներուն, երբ տակաւին չունէինք անկախ Հայաստան եւ կանոնաւոր բանակ հայր իր ամբողջ ուժերը դրաւ ինքնապաշտպանական խումբերու կողքին: Այսպիսով ան կազմեց բանակ եւ արձանագրեց յաղթանակներ:

Երբ «Ազգ-բանակ» կ'ըսենք, չի նշանակեր թէ երկիրը կը գտնուի բանակի հսկողութեան տակ: «Ազգ-բանակ» ըսելով կը հասկնանք միասնականութիւն. համախմբուած եւ կազմակերպուած աշխատանք, որուն նպատակն է ապահովել հայութեան անվտանգութիւնը: Գիտնանք նաեւ, որ միայն Արցախի անվտանգութեան պահպանումով, կրնանք ունենալ անվտանգ Հայաստան:

Մենք ալ, որպէս սփիւռքահայեր մեծ պարտականութիւն ունինք հզօրացնելու մեր հայրենիքը: Մեր գիտութեամբ, արհեստագիտութեամբ (Technology-ով), մեր գործերով, մեր գաղափարներով, մեր դրամական օգնութիւններով եւ եթէ պէտք ըլլայ նաեւ մեր արիւնով տէրը ըլլանք մեր հայրենիքին: Երբ ամբողջ ազգով, բժիշկ-հիւանդապահուի, ուսուցիչ-աշակերտ, մշակ-արհեստաւոր, երգիչ թէ արուեստագէտ, եկեղեցական, գրող թէ ծնողք-գաւակ ամէն մէկս իր միջոցներով ըլլանք ազատեր ու մեր աշխատանքով օգնենք մեր ազգին, վստահելով մենք մեր ուժին, «Ազգ-բանակ» գաղափարով մեր երկիրը կ'ըլլայ ամրոց, այսինքն ամուր բերդ մը, ուր թշնամին չի կրնար ներս մտնել:

# ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔԸ



Հայկական եօթը հին վանքերէն մէկն է Ամարասի վանքը, որ կը գտնուի ներկայիս Ատրպէյճանի կողմէ գրաւուած Արցախի Մարտունի շրջանին մէջ: Այս վանքի հիմը դրած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, 4րդ դարուն: Նոյն այս վանքին մէջ, 5-րդ դարու սկիզբին, Մեսրոպ Մաշտոցը բացած է Արցախի առաջին դպրոցը:

1293 թուականին, մոնկոլ-թաթարներ կողոպտած են Ամարաս վանքը ասար տանելով Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի թոռան՝ Գրիգորիս եպիսկոպոսի գաւազանը եւ ոսկեծոյլ խաչը: Աւելի ուշ, 1387-ին, վանքը քանդուած է Լենկթիմուրի արշաւանքներու ժամանակ: Սակայն հակառակ զանազան արշաւանքներուն, ան շարունակած է գործել իր դպրոցով:

Աւելի ուշ, 2 Սեպտեմբեր 1991-ին Արցախի Հանրապետութեան անկախութենէն ետք, Ամարասի վանքը եղած է Արցախի թեմին գործող վանքերէն մէկը եւ միշտ ունեցած է հարիւրաւոր հաւատացեալներ եւ զբօսաշրջիկներ:

Արցախեան պատերազմներուն ժամանակ, Արցախի այլ վանքերու եւ յուշարձաններու նման, ազերիները յաճախ ոմբակոծած են Ամարաս վանքը: Ներկայիս ան կը գտնուի ճիշդ սահմանին վրայ, ռուս խաղաղապահ ուժերու հսկողութեան տակ:

# ՀՕՐ ԿԱՄՔՆ ՈՒ ՄՕՐ ՈՒԺԸ

Թէ մայր չկայ կինն անզօր է.  
Երկունք ապրող կինն ուրիշ է.  
Մայր է. զակին կեանք տուողն է,  
Խաւարի մէջ, լոյս սփռող է  
Մայրը տան հուրն ու ճրագն է:

Հայրը ճիշդ է հիմնաքար է.  
Մայրը քարին շունչ տուողն է  
Ընտանիքին արթուն պահակ՝  
Մայրը հրաշք Սուրբ խորան է:

Հայրը միշտ ալ ճարտար ձեռք է,  
Մաքարող է, սայլն վարողն է,  
Հայ զինուորին ուժ տուողն է,  
Հայրենի հողն պաշտպանողն է:

Թէ տուն մտնես, ուր մայր չկայ,  
Ափսոս, քեզ դուռ բացող չկայ,  
Մորմոք սրտիդ սփոփանք չկայ,  
Խոր թախիծդ զսպող չկայ:

Մայրը միշտ յոյս ներշնչող է,  
Հաւատք եւ սէր սերմանող է  
Ընտանիքը, որպէս մասունք՝  
Երկիւղով սուրբ աղօթողն է:

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ



Մեր պատմության ընթացքին հայ եկեղեցին մեծ դեր ունեցած է հայ ժողովուրդի ազգային ինքնության եւ հայր հայ պահելու գործին մէջ: Հայ եկեղեցին 4-րդ դարէն սկսեալ եղած է հայ լեզուն, հայ մշակոյթն ու ասանդութիւնները տարածողն ու պահպանողը: Մեր առաջին հայերէն գիրքերը գրուած են հայ սուրբերու ու թարգմանիչներու կողմէ: Իսկ յարձակումներու կամ պատերազմներու ժամանակ, հայ եկեղեցին ուժ տուած է հայ զինուորին, յոյս ու հաւատք ներշնչած է հայ ժողովուրդին:

Օրինակ՝

-Ղեւոնդ Երէց, որ մասնակցած է Աւարայրի ճակատամարտին իր քաջալերական խօսքերով ու աղօթքներով ոգեւորած է հայ զինուորները:

-Իւրիմեան Հայրիկ Պերլինի վեհաժողովէն վերադարձին հայ ժողովուրդին պատմած է հերիսային եւ երկաթէ շերտփին պատմութիւնը եւ ըսած. «Ձեր բարեկամներուն եւ ազգականներուն իբրեւ նուէր զէնք տարէք. զէնք առէք եւ դարձեալ զէնք: Ժողովուրդ, ամէնէն առաջ քու ազատութեան յոյսը քու վրայ դիր. քու խելքին ու բազուկին ուժ տուր. Մարդ ինքնիրմէն պէտք է աշխատի, որ փրկուի...» («Հայոց Հայրիկ» էջ 511-513):

-1918 մայիսին, երբ թրքական բանակը արձակած է Երեւանի ուղութեամբ, Հայոց կաթողիկոս Նորին Սրբութիւն Տէր Տէր Գէորգ հինգերորդ մնացած է իր ժողովուրդի կողքին եւ հրամայած է հնչեցնել բոլոր եկեղեցիներուն զանգերը, ուղղելով հայերը դէպի կռուի դաշտ:

-2015-ի ապրիլին, Մեծ Ի տան Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը Սիսի կաթողիկոսութեան հողերուն վերատիրանալու համար դատ բացաւ նախ թրքական, յետոյ եւրոպական դատարաններուն առջեւ. Յեղասպանութենէն դէպի ճանաչում եւ հատուցում պահանջելով:

-Արցախեան վերջին պատերազմներէն մինչեւ այսօր, Պարզեւ սրբազանն ու այլ հոգեւորականներ իրենց խօսքերով, ուժ կու տան հայ զինուորներուն, պաշտպանելու իրենց հայրենիքը:

Հայ եկեղեցին ազգային է եւ կը տարբերի միւս եկեղեցիներէն: Ան միացուցած է մեր ժողովուրդին պատմութեան հետ: Այս իսկ պատճառով, հայր, ուր որ ալ հասեր է սփիւռքի տարածքին, կողք-կողքի ուզեր է շինել եկեղեցի, դպրոց եւ կեդրոն: Այս երեքը զիրար կ'ամբողջացնեն եւ ասոնցմէ իրաքանչիւրը ունի իր յատուկ տեղը:

Սիրենք հայ դպրոցը, յաճախենք հայ եկեղեցի ու հայ կեդրոն եւ մեր ամէն ուժերով տէր կանգնինք, որ անոնք մնան միշտ ամուր ու աշխույժ:

## Ո՞վ կ'ուզէ ըլլալ բազմազէտ

1-Երբ տեղի ունեցան Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի հերոսամարտերը:

- ա) 1991 սեպտեմբերին:
- բ) 1918 մայիսին:
- գ) 1915 ապրիլին:

2- Ո՞վ գրած է «Ձախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան» երգը:

- ա) Աշուղ Զիւանին:
- բ) Յովհաննէս Թումանեանը:
- գ) Սայաթ Նովան:

3- Գանատայի մէջ, 2015-ին որդեգրուեցաւ 587 բանաձեւը. ինչ կ'ըսէ այդ բանաձեւը:

- ա) ապրիլ ամիսը կը հռչակէ ցեղասպանութիւններու յիշատակման ամիս եւ ապրիլ 24-ը Հայոց Յեղասպանութեան յիշատակման օր:
- բ) Մայիս ամիսը կը հռչակէ Հայկական ժառանգութեան ամիս:
- գ) Մայիս ամիսը կը հռչակէ Հայոց Յեղասպանութեան յիշատակման օր:

4- Ռուբէն Գոյումճեան ինչ խրատեց:

- ա) Թուրքը բարի դրացի է. կրնանք իրեն վստահիլ:
- բ) Թուրքը կը խոստանայ պահպանել հայերու իրաւունքները:
- գ) Երբեք չհաւատանք թուրքին. ըլլանք միշտ

պահանջատէրը մեր իրաւունքներուն, ըլլանք միասնական. երբեք չտկարանանք ու չյանձնուինք:

5- Երբ մեր երկիրը կ' ըլլայ ամրոց, ուր թշնամին չի կրնար ներս մտնել:

- ա) երբ բոլորս միասին վստահելով մեր ուժերուն, համախմբուած ու կազմակերպուած գործենք որպէս «Ազգ-բանակ»:
- բ) երբ կը վստահինք օտար մեծ պետութիւններուն, որ մեզի օգնեն, որովհետեւ մենք առաջին քրիստոնէայ ժողովուրդն ենք:
- գ) երբ կը վստահինք ռուսին, որ մեզի օգնէ, որովհետեւ ամէնէն մօտիկ քրիստոնէայ երկիրն է:

6- Ո՞ր թուականին հայ քաջեր ազատագրեցին Շուշին:

- ա) 28 Մայիս 1918-ին:
- բ) 9 Մայիս 1992-ին:
- գ) 9 Մայիս 1918-ին:

7- 4-րդ դարուն, ո՞վ հիմը դրած է Ամարասի վանքին:

- ա) Գրիգորիս Եպիսկոպոսը:
- բ) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:
- գ) Սուրբ Մեսրոպ Մաշտոցը:



Մանկապատանեկան Գործընդեր կը հովանաւորեն ՀՅԱԿԻՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Յեռաձայն (514) 332-3757  
Յեռապատճէն (514) 332-4870  
Email: sylva@horizonweekly.ca

Թիւր պատրաստեց՝ Անահիտ Պալեան